

THE ARARAT,
Armenian Journal
of
Politics, Science and Literature.
Published
Every Other Thursday,
by
P. M. AYVAD,
Editor and Proprietor,
No. 100 Centre Street, New York.



ԵՐԿ-ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

TO ADVERTISERS.
This paper has an extensive circulation among the Armenians throughout the United States and the principal cities of the world. It is an excellent medium for domestic and international advertisements, securing the very best results.
Rates of advertising will be found on the fourth page.

— ՄԵՐ ՍԿԶՔՈՒՆՔԸ ԱԶԳԻՆ ՍԿԶՔՈՒՆՔԸ Է, ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԱՇԽԱՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ — ԱՐԱՐԱՏ, Սեպտեմբեր 30, 1876.

Հ. Ա. Մ. Ս. Ս. Տ. Ս. Լ. Ի. ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ 1869. ESTABLISHED AT CONSTANTINOPLE
ՆԻՈՒ ԵՐԿ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՓԵՏՐՎԱՐ 12 1891. NEW YORK, THURSDAY, FEBRUARY 12
ՆՈՐ ՀԱՏՈՐ Ա. ԹԻԻ NEW VOLUME I NO. 4

ԱԶԳ

Եկեղեցական եւ գիւղական գործերու վերաբերեալ Հայերէն լեզուա ծանուցմունք, որը երկու մատնաչափե աւելի տեղ չեն բռներ, Թերթիս մէջ ձրի պիտի հրատարակուին:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ

ՈՒ ՂԱՔԱԿԱՆ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻ
St. Chrysostom's Chapel,
[Trinity Parish],
Corner 39th Street and 7th Avenue.

Ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան կը ծանուցուի որ առաւօտեան ժամերգութիւն կը կատարուի ի վերոյիշեալ Մատրան, ամէն Կիրակէ ժամը 1:30 ին յետ միջառուր:
Ի Դիմաց Հոգաբարձութեան, Հ. Է. ԿԻՆԵԱՆ, Փ. Մ. ԱՅՎԱԴ, Գարտուղար: Ատենապետ:

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ Ի ՆԻՈՒ ԵՐԿ:

Ընթերցող,
ՀՐԱՆՏ ՄԵՍՐՈՊ ՔԻՐԵԶՃԱՆԱՆ.
Թառախկալ Կիրակի, ի ժամ 2:30 յետ միջառուր, ի Կրկն Մատրան (Պրատուէյ և Տառներուրդ փողոց) կրօնական Պաշտամունք պիտի կատարուի Հայ լեզուաւ, ըստ գրութեան Անգղիական Եկեղեցւոյն:
Թարգմանք կը հրաւիրուին ամէն Հայեր կողմէ գտնուի և մասնակցիլ տոյն Պաշտաման:
ՆԵՒՏՈՆ ՄԵՍՐՈՊ ՊՈՅԱԶՃԱՆՔ Գարտուղար:

ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ ԱՆԳՂ. ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ
ՅԷԻՓԻՖԷՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԸ:
47րդ Փողոց, Լէքսինգթըն եւ Բարը Ալքնիներու մէջտեղ):
Պաշտօնեայ — Արք. Յովհաննէսեան. Դասախօսութիւն կսկսի, յետ միջառուր, ժամը 5ին, եւ կրօնական Պաշտամունքն՝ ժամը չորսին, Կիրակէ օրեր:

ԱԶԳ

Նիւո Եօրքի Հայաստանեայց Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնն պատուով ծանուցանել արգոյ Հասարակութեան, որ Եկեղեցական երաժշտութեան վարժութիւնը տեղի կու տնան ամէն Հինգշաբթի գիշեր ի ժամ 7:30, Ս. Ոսկեբերան Մատրան սրահին մէջ, Ուէսթ 39րդ Փողոցի և 7րդ Ալքնիսի անկիւն: Սրահին դուռը 7րդ Ալքնիսի վրայ է: Ամէն ազգայինը սիրով կը հրաւիրուին ներկայ գտնուիլ:

ԿԱԿԾԱՆՔ

Գրեց
Հ. Է. ԿԻՆԵԱՆ,
Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գլուխ, որ կը վաճառուի խմբագրութեան քով հատը 15 սէնթի:

ԵՒՆՈՒՆ ԵՒ ՎԵՑԻՑ ՈՒՂԵՐՁԻՆ

Ի Պ. Ա. Ս. Ս. Ս. Ս.

Հայոց Կեդրոնական Յանձնախումբն հետեւեալ նշանաւոր յայտարարութիւնն հրատարակած է, որ գաղտնապէս Կոստանդնուպոլսոյ մէջ գրուած և փողոցներու անկիւններն փակցուած են: Հայ ժողովրդեան, և յիշատակ ժողովրդեան սոյն ձայնը դարձեալ կը տապալէ Կայսերական շնորհներով եւ պատուանշաններով բեռնաւորած Հայ Էֆէնդիներու լարած մատուցած հայ դարանները, և անգամ մը ևս կը գիտցնէ նոցա և աշխարհի թէ զձայն ազգին ստութեանց և մատուցած զոհ կարենալ ընելու դարն անցած է:

Ահաւասիկ այդ անկեղծ և արդարացի յայտարարութեան պատճէնը: «Օսմանեան կառավարութիւնը որ անուրանալի հնարքներով, կուզէ խեղդել իւր բարբարոսական լուծին տակ հեծող (չի յիշեմ մեր արեւելեան ինքնապաշտպանութիւնը) հարստահարեալ և կոխտեսալ լազմաց տառապանաց աղաղակները, յաջողած է երեսուն և վեց Կոստանդնուպոլսոյ Հայերու ստորագրութիւններն առնելու: Առաջինը Սուլթանն ուղղուած ուղղորդի մը ներքեւ, որու մէջ ստորագրեալք իրենց առ զահն հաւատարիմ ըլլաւ կը հաստատեն, և կը յայտարարեն թէ ամբողջ Հայկական խնդիրը պարագայէն մի քանի խռովարարներու գործ է: Որքանի մը մեզ հոս այդ սղակներն պարենակութիւնն յիշեմ, որ ուրիշ բան չէ բայց ի՞նչ այնպիսի ստութեանց և ստորին ու անարգ յայտարարութեանց կրկնումը, որ Օսմանեան կառավարութիւնը ստոյգութիւն ունի ժամանակէ ժամանակ ստորագրել տալ տառապաններու և զժողովներու, մինչև իսկ այն դաւաճներու մէջ ուր Թրքական հարստահարութիւնն և անարգարութիւնը ամէն տեղէ աւելի զգացուած են:

«Հաւատարմով որ եւրպիւր մէջ չկայ այնչափ պարզամիտ անձ մը որ Պաշտան այս վատ ծառայներուն խօսքին հաւատ ընծայէ, մեզ միայն հրապարակաւ կը յայտարարեմք թէ այդ երեսուն և վեց ստորագրութիւնները որ և է առմամբ մեր ազգին ներկայացուցիչներն չեն, Հայերը զիտեն թէ այդ ապերձանիկ անձինքը ճիշդ ինչ արծէնով կրնան գնահատուիլ, և բացարձակապէս մերժած, են նոցա ազգն ներկայացնելու իշխանութիւնն զոր բարձրագոյն Դուռը խորհուրդ տուած էր անոնց խնդրելու ազգէն:

Մեր ազգին առ Սուլթանն և իւր կառավարութիւնը ունեցած զգացմունքը Հայոց Եկեղեցական Համագումար ժողովոյ կողմանէ ի գիր առնուած և Ազգային երեսփոխանական ժողովոյ կողմանէ վաւերացուած յիշատակագրին մէջ կը պարունակուին: Մեզ կառավարող Սահմանադրութեան համեմատ, միայն այս երկու մարմինները իրաւունք ունին յանուն Հայ ժողովրդեան խօսելու: Իրաւունք մը, որ ոչ ոքի թոյլ կուտամբ զանի բռնաբարել, Վասնորոյ, խաւի և հեգնու-

թեամբ կը բողոքեմք յանուն մեր ներկայացուած ուղղորդին դէմ: Դա լոկ անձնական կարծեաց արտայայտութիւն մ'է, Թրքական կառավարութեան վարձուած այնպիսի ծառաներու զորս մեր ազգային ժողովներէն յաւէտ արտաքուստ եմք: Եթէ Հայերը հրաւիրուէին իրենց կամքը յայտնել, առանց մահուան կամաւորման երկիւղի, չըստորագրելէ իջատ ոտնակոխ պիտի ընէին այդ անարգ ուղղորդը որ Սուլթանին ներկայացուեցաւ անամօթ մատնիչներու կողմանէ կայսերական շնորհաց փոխարէն, Նաև համարձակօրէն պիտի յայտնէին իրենց արհամարհանքը և ատելութիւնը Սուլթանին բռնապետական կառավարութեան դէմ, և իրենց հաստատորոշումը՝ նորա անտանելի լուծը թօթափելու:

ԽԱՂԱՔԱԿԱՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայաստանի վիճակը օր ըստ օրէ գէշնալու վրայ է, մեծ գիւղօրէից շատերուն մէջ զօրագունդի հաստատուած են, որք պաշտպանութեան քօղին ներքեւ գիւղացիները կը կողոպտեն: Օրինաց և կարգապահութեան այս կարծեցեալ պաշտպաններու ամէնէն վերջին գործը վանի Բրիտանական Հիւպատոս Մր. Տըվէյ եղած է: Գաւառին մէջ շրջագայաւորութեան ելած ըլլալով Արշակ գիւղն իջաւ: Գիշեր ատեն գիւղին մէջ հաստատուած գունդէն քան «Ձիւնորներ», գողութեան նպատակաւ, Հիւպատոսին բնական տունը մտան: Մր. Տըվէյ ճիշդ ժամանակին արթննալով յաջողեցաւ մի քանի ատրճանակի հարուածներով զինուորները փախցնել: Զօրաց հրամանատարը պատահածը իմանալով, անմիջապէս գնաց իւր զօրաց ընթացքին համար ներողութիւն խնդրելու: Արշակի մէջ կեցող զինուորը ոչ սակաւ Պարսկական քէվրաններ ևս կողոպտած են: Այս զօրաց իրենց արարքի նկատմամբ տուած պատճառն առ է որ ամիսներէ ի վեր թուրք ընդունած չունին և կառավարութիւնը իրենց բաց — հրաման տուած է կրցած կերպով չին ինքզինքնին հոգալու:

Թուրք կառավարութեան այս զօրքերը գանալան գիւղօրէից մէջ այս կերպով բնակեցնելուն բուն նպատակը սա եղած ըլլալ կը թուի որ դրբա այն աստիճան կեղեքեն և կողոպտեն Հայերն որ այս վերջիններն պարտաւորին այդ տեղերէն գաղթելու, ուր Հայերը անտարակուսելի կերպով մեծամասնութիւն կը կազմեն:

ՏԵՂԻ ՆԻԼԳ

ԶԵՅԹՈՒՆ

Հինգերորդ զօրաբաժնի հրամանատար Մէհմետ Ալի Բաշա, Զէյթունի Հայ ապստամբաց մէկ քանիներն գերի բռնած է, բայց մեծագոյն մասը լեռան մէջ են տակաւին, յորմէ միայն կը մեկնին պահպան զօրաց մէջ սարսափ ձգելու համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱԽԵՐ.

Կարինէն Յունվար 16 թուականաւ կը տեղեկացնեն թէ Բիւրտաւազական խումբ մը Մշոյ մօտ Վարդո գիւղի մէջ հարսանեաց հանդէսի մը վրայ յարձակելով հարսը փախցնել փորձեցին: Բայց սակայն Հայերը ուժգին դիմադրութիւն մը ընելով և երկուստեք հրացաններ գործածուելով, խել մը անձինք վերադարձան: Աւազակապետը մեռցուելով նորա ընկերները Մուշ փախան, և հոն կառավարութեան այնպէս հասկցուցին թէ Հայերն իրենց գլխաւորը սպաննած էին: Հետեւաբար զօրաբաժին մը ղրկուեցաւ ի վարդո որ գիւղն պաշարէ և 80 Հայեր ձերբակալուեցան: Բայց ի վերջոյ ասոնց վաթսուս երկուքը թող տրուեցան, իսկ մնացեալ 18ը անձինք տասն և հինգ տարի շղթայակալ բանտարկութեան դատապարտուեցան:

ՎԵՃ. ՍՈՒՂԱՆՆ ԵՒ ՄԻՒՍՏՈՆ

Վեճ. Սուլթանն՝ ի փոխարէն այն նուէրներուն զորս ծառնի կայսրը. զրկած էր Ն. Վեհափառութեան, արարական գեղեցիկ երեք նոյնքներ նուիրած է Միքատոյին: Վեճ. Սուլթանը հեռագիր մը ուղղելով ի Թուրք ճարտարական մայրաքաղաքն, զայս ծանուցած է Միքատոյին, որ պատասխանի շնորհակալութեան հեռագիր մը ուղղած է Ն. Վեհափառութեան:

Այս նոյնքները պիտի յանձնուին ճարտնի մէկ քանի սպայից և նաւաստեաց, որք ճարտարական մարտնաւերու մեկնելէն յետոյ ծառն պիտի ուղղուին տանելով այդ նոյնքները:

— Վեճ. Սուլթանին հրամանաւ ճարտարական մարտնաւերէն հազարապետ մը, հարկւարապետ մը և չորս նաւաստիներ երէկ Ն. Վեհափառութեան առջև զինուորական մարզանքներ կատարեցին: Վեճ. Սուլթանը խիստ գոհ մնաց կատարուած փորձերէն և ի նշան Իւր բարձր գոհունակութեան, նուէրներ տուաւ սպայից և զբաւական պարգևներ նաւաստեաց: — Արեւելք:

ԱՆԿԵՂՇՈՂՆԵՐ.

Լօնտօնի Արմէնիա իւր փետր. 1ի թուոյն մէջ ԱՐԱՐԱՏԻ վերատին ի լոյս ընծայման լուրը ծանուցանելով զանդեմ ճշգրիտ ակնարկ մը ևս կը նետէ թերթիս և նորա հաստատող — խմբագրին անցեալ պատմութեան վրայ: Տիար Մինաս Զէրազ, մեր հանգուցեալ Հօր ողբարկ մահուն փերջին սրտածմբիկ պարագայներն ճշգրիտ նկարագրելէ ետեւ կը յաւելու:

«Նորա մարմինը մեծ հանգիստի շաւիղի վրայ անկեղեցւոյ բակին մէջ թաղուեցաւ հակառակ թուրք Պաշտօնէից բուռն ընդդիմութեան. որք պարտաւորեցան յետ քաշուել, Կոստանդնուպոլսոյ քաջասիրտ Հայ գաղթականութեան ըստ պատնալից դրից առջև: Այս մարտիրոսին որդին է որ, յետ տասն և չորս ամաց, դրօշակն կը պարգէ, և կը կանգնի իւր հօր և իւր ազգին վրէժը լուծելու:»

Այո՛, վեճ և աղիւ հայրենակից, ինչ քաղցր է մեզ քան զէր Հայրենեաց և ազգին, որու միայն նուիրեալ էր Մատթէոս Այվատեան, և որու միայն նուիրուել բնական պարտք է մեզ:

Ա.	ՄԷԿ
Ր.	ՏԱՐԵԿԱՆ
Ս.	\$2.
ԿԵՍ	Ր.
ՏԱՐԵԿԱՆ	Ս.
\$1.	\$

Հիմայ է Ձեր բաժանորդ գլուխ ժամանակը, եթէ, կուղէք Ձեր եւ ձեր հայրենակցաց իղձերն իրականացնել. այսինքն ԱՐԱՐԱՏԸ ԵՒ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՐԻՎ վերածել:

ՅԻՇԵՑԻՔ

որ երբ ԱՐԱՐԱՏԸ շաւաթաթերթի վերածեմք, բաժանորդագլին չի պիտի փոխեմք եւ ոչ ալ թերթին գրքը պիտի պղտկեցնեմք, այլ թերեւս աւելի պիտի ընդարձակեմք:

Բայց սակայն, կարելի է մեզ այս բանն ընել առանց մեր ամէն բարեկամներէն և համակիրներէն իմացած ըլլալու. Ձեռնէ տակաւին չիմացանք. եթէ Ձեռնէ իմացանք ձեր բարեկամէն չիմացանք. Ձեր կողմանէ երկու խօսք բաւական պիտի ըլլայ Ձեր գրացին ալ համոզելու: Թարգմանք Ձեր բարի լուրերուն կ'սպասէ

Ա.	ՄԷԿ
Ր.	ՏԱՐԵԿԱՆ
Ս.	\$2.
ԿԵՍ	Ր.
ՏԱՐԵԿԱՆ	Ս.
\$1.	\$

ՔԱՆԻՑՈՐՆԻԱՆ ԼՈՒՐԵՐ

Հետեւեալք քաղուած են Յրէշնօ բնակող Հայոց ոմանց նամակներէն, զորս մեծայարգ Տիար Սարգիս Մ. Մինասեան հաճած է հաղորդել թերթին խմբագրութեան, և որոյ հրատարակութիւնն օգտակար կը գտեմք Ամերիկեան Հայ գաղթականութեանց նկատմամբ:

« Տեղւոյ համեմէն յետէ գրեթէ միշտ գործով զբաղած եմ: Հոս հասնելէս քանի մը օր ետքը լսեցի որ տղաս Նիւ-Եօրք հասած է եղեր, անմիջապէս ստակ ճարեցի թարեկամներէս և տղաս քովս բերել տուի, թէ բարեկամաց օգնութեամբ շահեցայ բաւական դրամայնպէս որ տղաս ճամբուն ծախքը և իմ մասնաւոր պարտքս որ տեղս ըրած էի գոցեցի: Մինչև չորս օր առաջ խաղող կը քաղէի, այս տարի լեցուն գինով ծախուեցան այգիներու երրորդ բերքը և այդ պատճառաւ տեղոյս Հայերուն շատերը բաւական չափ ունեցան առոր մէջ, գնելով այգիներուն երեսները և քաղած խաղողներն ծախելով գործարաններուն: Խիստ ուրախ եմ որ այս աշնին երկիրը եկայ, յիրաւի ըստ ծանոթի պէս, Հայի համար չկայ այնքան յարմար տեղ մը քան զԴաւիթօբնիայ, նամանաւնդ Փրէշնօ քաղաքը և գաւառն թեպէտ չունին մէկ բան մը որով յայտ հաստատուի սակայն միջոցներ պակաս չեն և բարեկամներն ալ կօչեն ինձ աս մասին: Փրէշնօյի Հայոց վիճակը նիւթականապէս երթալով կաղեկնայ, բայց կը ցախիմ ըսել որ այս յաջող Հայեր տակաւին չունին հաստատութիւն մը ուր տեղաւորուելու ժողովին և զիրար հրահանգեն:

Մենք հոս այս նոր և երջանիկ աշխարհին մէջ, մտաւորապէս և բարոյապէս մեր սիրելի բարեկիցներու և Հայրենակիցներու պէք կը քաշենք: Երբեք մեր օրուան երբեք տեսնէի Հայ ազգին տգիտութեան, նախապաշարման և բռնակալութեան ծանրապիկը չլիայնալուն փշուրիւր: Եթէ այդ միտքաբերութիւնը, Աստուած ինձ տար իմ մահուանէս առաջ ուրիշ բոլոր ինքի տրուած բարեքներէն աւելի նախամեծար և օրհնեալ պիտի համարէի... Եւ չեմ կրնար հաւատարմ ստաղծոյց, թեթեւութիւն, անպարկեշտ անարգար և անգութ մէկ մը կրնայ ազգասէր ըլլալ, որչափ որ ալ խորամանկ և խելացի ու գործունէ պիտի լինի մեք Հայքս մեր ուսման և գործունէութեան հետ ունենալու ենք մեծաւ մասամբ վարուց և բարու անբիծ առաքելութիւնը, քան զի այսու միայն ժողովուրդ մը իրապէս պատուաւոր և երջանիկ կը լինի... Կը ցախիմ որ Փրէշնօյի Հայերն տալիս մեծաւ մասամբ իրարմէ անջատեալ կապիկն թէպէտ և բաղդատելով աւելի յաջող և հարուստ են և պիտի ըլլան: Այս գաղթականութեան մէջ թէպէտ չկայ կնճռոտ մէճեր, բայց կայ, և կը վախճամ որ պիտի մնայ երկարատեւ, ստակ շահելու չափազանց տեսչը, և այս մասին եղած մրցումը իրենց ժամանակ չթողուր որ ընկերասիրութիւն ուսնին:

Այս տարի Փրէշնօյի Հայերը թուով կաւելան, համուսնութիւնք եղած են որ ըսել է թէ հընտանիք աւելցած է և քանի մը տուններ ալ նոր գաղթականութեամբ աւելցած է: Հայոց ամբողջ թիւը 200 ի կը հասնի և մօտերս գտալի կերպով Հայոց կաւուածները կաւելնայ: Հայերուն յայտնի գիտցուած հոգերը 810 էյքըրի հասաւ քաղաքէն դուրս և այս հոգերուն միջին գինը մշակեալ և անմշակ, 400 թաւեր կարծէ մէկ էյքըր որ ըսել է ամբողջ արծէք քաղաքը:

միլիոն թաւեր, և թերեւ աս գումարին կիսունը չափ արծողութեամբ հողեր ալ քաղաքին մէջ ունին... Ժողովուրդին յոյսեր շատ փայլուն են չամիչին համար: որչափ խելացութիւն կընէին Նիւ-Եօրքի և Ուաշինգթոնի դրամագլուխ աւնեցող Հայերն հոս գային և երկիր գնէին: կը հաւատամ թէ դրամագլուխ սուղ ժամանակի մէջ կրկնապատկի ճարտար դրամատիրով ձեռքը թող ան բարոյական մաքրութիւնը որ բնականաբար Հայն կրնայ հոս վայելել ուրիշ տեղերէ աւելի, որն որ հարստութենէ խիստ աւելի յարգի է: Որչափ կը ցախիմ երբ մտածեմ թէ Հայերն միշտ կուգան և կը թանձարանան Նիւ-Եօրքի Ուաշինգթոն, Պիոնիին և մէջ և հոն կը մնան ծառայութեան գործերու մէջ, իրեն բանուոր, կամ կը ջանան մրցել իրենց դուքանքայ դրամագլուխով տեղոյն հարուստ գործարանատէրերուն հետ: Խիստ անհաւատարմը ու պէտք է նորեկ Հայերուն խրատ տրուի որ երկրագործական կենաց հետամուտ լինին որ առաւել օգտակար է և վաստակաւոր:

« ՀԱՅԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ »

Հայկական Միութեան Յուն. Յ. Ի նիստը նշանուոր նիստ մը եղաւ, այնու զի ամերիկեան Հայ գաղթականութեան կենսական մի խնդրովն զբաղեցաւ, որ անտարակոյս սոյն գաղթականութեան պատմութեան մէջ արդիւնաւոր էլ մը պիտի լինէ: Առաջին և երկրորդ ատենապետաց քաղաքականութեան պատճառաւ միաձայնութեամբ նոյն նստին համար աստեալպէտ ընտրուեցաւ Տիար Յովհաննէս Տիօնեան: Երկրորդ թիւն էր հարկերէ աւելի: Ատենական նախնական գործողութեանց աւարտելէ վերջը Պր. Երուանդ Էքէրճեան (Առմսթրալի) նուագածութիւններ ըրաւ խիստ յաջողութեամբ, որք ըստ արժանեցի գնահատուեցան թիւն պատճառաւ կողմնէ բուն ծափահարութեամբ, յետ որոյ գործադիր ժողովն ըստ սովորականին մատոյց իւր տեղեկաբերն, որ ընդունուելէ վերջ, յարգել աստեալպէտ ներկայացոյց ժողովոյն զնիւթ. Տ. Յովհէփ Մ. Վրդ. Սարգսեան, որ ըստ խնդրանց գործադիր ժողովոյ կամք յայտնած էր խօսելու Միութեան նոյն նստին մէջ:

Արժ. Հայրենի որոյ անխնայ ջանք և բազմաբարեք հոգածութեան առարկայն եղած է նահանգացի Հայ գաղթականութեան բարբորութիւնը ու զարգացումը, իւր սոյն երկիրեան աստեալստեղծութեան նիւթ ընտրած էր Ամերիկեան Հայ գաղթականաց ներկայն ու ապագայն, իւր տանն և թեթեւ պաշտօնավարութեան մէջ ստացած փորձառութեան և տեղեկութեանց իբր արդիւնք:

Գործունէայ Ս. Հայրենի ամենայն մանրամասնութեամբ և համոզիչ օրինակներով նկարագրեց Ատլանտեան եղբրաց Հայ գաղթականութեան գործաւոր դասուն ապրիւնային վիճակն. և յայտարարեց թէ եթէ ներկայ կացութիւնը լուրջ ու շաղկապութեան չառնուելով անխնամ թողուի, Ամերիկեան Հայութեան մեծագոյն թիւոյն բաժինը պիտի լինի թշուառութիւն, և հիւժիւն և սպառնալի տարագրութիւն մը միայն: Ինչպէս եթէ ընդհանրապէս ի նկատի առնուելով յարատեւ ջանքից առարկայ լինի կրնայ արդիւնաբեր լինի մեր ազգին և հայրենի երկրին համար: շատերը կարծեցին, ըսաւ նորէն արժանապատուութիւնը, թէ սոյն ապրիւնային վիճակին և ապագայ թշուառութեան առաջն կրնայ աւնուել, արգիլելով թուրքական Հոս Հայոց գաղթումը, և այս տեսութեամբ շատերը ոչ միայն թուրքերոյ լրագրաց մէջ ընդարձակ յօդուածներ գրեցին, այլ և խնդրեցին ազգային խիստնութենէն ազդու միջոցներ ի գործ դնել առայն: Բայց փոր

ձը ցոյց տուաւ թէ յոյժ անգոր են այդ, ձեռք առնուած միջոցներն նպատակին յաջողութեան համար: Ըստ որում առանց պատճառները մէջտեղէն վերցուելու չ'աղբիւր արդիւնքը, ուստի և հակառակ ամէն պաշտօնական և անպաշտօն արգիլքներու սկսաւ ածիլ և ընդարձակիլ օրքան զօր գաղթականութեան թիւը արագապէս: և պիտի աճի ցորշափ Հայը իր բնիկ երկրին մէջ չի գտներ ապրուստի բաւական միջոցներ ու գիւրութիւններ, անգործութիւն, արուեստից կամ գիտութեանց զարգացում: և ցորշափնոր աշխարհը աշխարհէ կը հիւրնկալէ և կը հրապտուէ առ ինքն գիւրդ գաղթականութիւնները, նպատակով շոյա բարոյապէս և նիւթ ապէս:

Խօսելով Հայ գործաւոր դասուն անյաջողութեան և ապրիւնային կացութեան վրայ ըսաւ թէ, արդարեւ ամենագլխաւոր պատճառ կրնայ ներկայութիւնը այնմ, անոնց մեծագոյն մասին տեղական լեզուն գիտութեան, դրամագլխէ և արուեստագէտ լինելէ զուրկ, ցայս միջավայր գաւը, որոյ համար կը պարտաւորին ամենաբարձր միջոցներով թափառիլ և իրենց հայրենակցաց վրայ ծանրանալ: և մեծամեծ գծուարութիւնով գործ գտնողներն իսկ կը պարտաւորին ամենաշնչին օրականով ամենածանր և նոյն իսկ վտանգաւոր աշխատութիւններ յանձն առնուլ գործարանաց մէջ, որով շատ անգամ կը կորնան իրենց անձնական առողջութիւնը, մարմնոյ անդամին մին կամ միւսը, և կամ զխոլի իրենց կենսը զոհ կուտան վերահաս վտանգաց և հիւանդութեանց, որք կը յառաջանան պործոյն հետ իրենց ունեցած անյարմարութեանց, բայց ըսաւ չեղեւելով, մի ուրիշ զօրաւորագոյն պատճառ ևս չի կրնար նկատուիլ խնամատար մարմնոյ մը անգոյուցութիւնը, որ եթէ լինէր, ինչպէս ունին այլ գաղթականութիւնը, անշուշտ նա պիտի ուսումնասիրէր երկրն արուեստական առեւտրական խաղային գործոց և ընթացից վիճակը և ամենօրեայ նորանոր փորձառութեամբ պիտի կրնար միջոցներ հայրենայի ըստ կարելոյն Հայ գաղթողներու, որով նոքա գիւրութիւն պիտի ունենային զարգանալ այլ և այլ ճիւղերու մէջ և արդիւնաբեր ընել իմենց ժամանակն ու աշխատութիւնը ապագայ խօստացող գործոց մէջ, քան զատապարտել գործաւորական հիւժիւն և սպառնալի կենաց մէջ:

Եւ եղբայրացեւելով, Արժանապատիւ Հայրենի առաջորկեց որ ժողովը եթէ օգտակար կը նկատէ խնդրը, ուշադրութեան առնու անմիջապէս և կազմէ քանի մը ձեռնհաս և փորձառու ազգայիններէ բաղկացեալ կայուն յանձնաժողով մը իմաստասիրելու համար այս դժուարին բայց ամենակարեւոր խնդրը, վրաստակութիւն յայտնելով թէ ոչ ոք պիտի զննայ այսպիսի կենսական խնդրոյ մը համար աշխատիլ: Յայտնեց նաև թէ այս մասին նորին Արժանապատուութիւնը գիտմով ընելով գաղթականութեան վաղեմի և պատուաւոր անդամներէն Մեծ. Տեառք Մ. Մ. Մինասեանի և Ա. Սահակեանի նորագ հաճութիւնը անուանելի մը ի լուր սոյն տեղեկութեան ուրախութեամբ և համակրութեամբ ծափահարեց ժողովը:

Սոյն նիւթին վրայ անդամներէ ոմանք խօսելէ ետեւ ըստ առաջարկութեան Տիար Հրանտ Մ. Բիւրէճեանի Միութեան նախագահ Տիար Պօղոս Յակոբեան և քարտուղար Տիար Յ. Ս. Թաւշանճեան օգնական արուեստան Արժ. Ս. Հօր խորհրդակցելու Տիարք Ս. Մինասեանի և Ա. Սահակեանի հետ և իրենց յարմար դատած թուով յանձնաժողով մը կազմելու համար:

Ժողովականք ժամը 11 ին մեկնեցան սրահէն, զոհ սրտիւ և լի

յոյսով որ վերոյիշեալ ազգայնոց պէս փորձառու և կարող ազգայինք ի սրտի ունենալով տեղոյս գաղթականութեանց բարբորութիւնը, ամէն ջանք ի գործ պիտի դնեն Հայ գաղթականաց ապագայն բարեօրոյն:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԱՌԱԿ

Հետեւեալ առակը որ Ռուս-Թրքական պատերազմէն վերջը, Հայ թերթի մը մէջ հրատարակուած է, խմատով ալ հետաքրքրական ըլլալուն համար աստ կարտապագեմք:

Երբոր Աղամն եւ Եւան Դրախտէն վաճառուեցան. Շինեցին մի փողը տուն. Կանչեցին շուն ու կատուն Որ պահպանէ դնեն այն տան:

« Ինձի նայ » ըսաւ շան Մեր նախահայրն Աղամ. Բեզ արտաքին թշնամիներ վանելու պաշտօն կուտամ. Իսկ դուն, կատու, ուշադրութիւն, Ձըլլայ որ այն չար մկներ Գան ու ընեն այս տանը մէջ Հազար մնաս խումու կեր. Եւ փոխարէն իմ քսակէն Ձեզ կերակրել պարտքս ըլլայ. Եթէ կուգէք կինս ալ վկայ. Թէ գտնուի մենէ մէկը Ձեր դէմ երբէք անիրաւ, Թէ անթի թողուն զձեզ Թէ փոխարէն իմ քսակէն, Եկէք ինձի բողբոջեցէք Ձանոնք աղէկ մը պատժեմ. Ձի ես այս տան գործածեցի Արդարութիւն իբր և վէմ:

Պէտք է նաև սա ալ յիշել Ծնած էին Կայէն Աբէլ, Թէ պատճառեալ փղեղ ատէս Աղարկի և ըսաւ Կայէն Ուրախութեամբ Աբէլին:

« Մեր ծնողքը քուչուք բսիկ հոս բերին:

Եկուր խաղանք զուարճանոնք նոցա հետ:

Եւ վերջէն ալ քաշենք տփոց ծեծ ու փետ:

« Բիշ մ'գրօսնուք եղբայր, արի՛ Բայց Աբէլին սիրտը բարի, Ձուզեց ընել այդ կենդանեաց չարութիւն:

« Է՛հ՝ ես կընեմ » ըսաւ Կայէն մեկը դուն:

Որ գնաց շանը բթին բերին Ռեժով մէկ հատ մը զարկաւ. Եւ կատուն պոչէն սղմեց Որ խեղճը պօռտց Մեաւ:

« Աղբար քեզի ինչ՞ ըրինք Ու դուն կընես մեզ չարիք: » Ըսին նոքա և գնացին Գանքատեցան մեծաւորին, « Վ'այ անգագամ, ըսաւ Աղամ, Գանցէ հելէ դուք այս անգամ, Ես այն չարին հախէն կուգամ: » « Ող ըլլաւ Տէ՛ր, որ մեզ պաշտպան կըլլաւ ըրին » և ետ գարձան: Մի թողուր որ անկիրթ մեծնան վերջը ըրածիդ կը գըլաս, Գուցէ օր մը այդ չարիքէն, Մեզալ կեղծ մեծակ մաս: Ուստի պատժէ դա չար Կայէն: » Ըսաւ Եւայ իւր երկան:

« Հոգիդ սիրես պէ՛ կնիկ Դեռ պզտիկ են թող խաղան, » Բայց վախեալով որ չըլլայ Եւային խախը մնայ, Մեկէն կանչեց « Ծօ՛ կայէն Ձես խախի դու անօրէն: Ինչո՞ւ ասոնք միշտ այսպէս Անխնայ կը չարչարես: Մէկ մ'ալ երբէք այդ կենդանեաց վնաս չընես հա՛ տղաս: » Բայց Կայէնին սրտին անգութ Հանքարտ խղճով շարունակեց Խեղճ կենդանեաց քաշել նա ծեծ, Անոնք կընեն ցաւին ա՛լ վահ Նա կը խնդար սրտանց քահ քահ:

Մորթի կտոր կամ չոր ոսկոր Հացի փշուր մեզ կերակուր Եւ վրայէն այսչափ զրկանք,

Տէ՛ գլխունուս ճար տեսնանք: » Ըսաւ կատուն իւր տնձկութեան ընկերին: Ահա գտայ ես մէկ միջոց և դիւրին: Երբ նորէն մեզ ծեծել գայ այն կատու զած,

Ես ձեռքը ձանկեմ, դու ոտքը խած: Մենք պաշտպանենք մեր իրաւունք եղբայր շուն,

Ապա թէ ոչ վա՛յ պիտի գայ մեր գըլխուն:

Ձի ահա տես՛, թէ Աղամ և թէ Եւայ Ձեն նկատե՛ր թէ մեր հալը ո՞ր կերթայ: »

« Ձէ՛ համբերէ բարեկամ Նոքա ունին մեզ խնամ Ահանջովդ չի լսեցիր ապերախտ թէ մեր Տէ՛րը տուաւ տղուն ինչ խրատ: »

« Ինչ՞ համբերութիւն էյ խնդեցար դուն » Ըսաւ մեր կատուն:

Եւ դեռ խօսքը բերանէ էր Որ Կայէն հոն էր եկեր: Մտաւ անոնց մէջերին, Կը կսմտէր մտերնի. Շունն հեղուկ ու խոնարհ: « Մընէր » կըսէր « պէ՛ աղբար » Եւ անխօսուկ թափե՛ր արցունք: Հազար ըրէ դուն հով-հո՛մ Բեզ մտիկ ընողը ո՛վ Ըսաւ կատուն ինքն իրեն. Եւ կամիտին փոխարէն Ճանկ մի զարկաւ Կայէնին, Ձեռքն ըրաւ արիւնլուայ:

Յետոյ փախաւ ու ելաւ Խոշոր ծառի մը վրայ: Կայէն ըսեւ այս ցաւուն Ձի գիմանար ու կուլայ: Աման մարիկ այս ինչ է ծաւը սիրտս կը զարնէ Բ'ա, հիմայ պիտի մարիմ վա՛յ չար բսիկ ափէրիմ: Կը սէր նա, և անդադար Աւազ աւազ կը պօռար: Ինչ կարծեցիր, ըսաւ կատուն Խոշոր ծառին մը վրայ:

Դուն ուզածդ մեղի ընես, Մենք չի խօսինք ո՞վ Կայէն: Պատուոյ վրայ կերպնում, ահա Ամէնք թող վկայեն: Երբ դու ընես ինձ չարիք Ես պիտի գամ քու հախէն: Այս Կայէնին խրատ եղաւ Եւ անկէց ի վեր բնաւ կատուն չէր մօտենար,

Իսկ շունն չարիք հաղար. Երբ կատուն ըրովէն անցնէր Նա կը պօռար հէմէն փիմտ: Բայց այս ոճով մեր կատուն եղաւ շատ հանգիստ: Մամիկս կը պատմէր թէ Այն օրէն մինչև այսօր կատուներն հանգիստ կապրին, Իսկ շուններն ստորին:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՒ ՄԵԾ ՀԱՆԴԵՍ Ի ՅԻՂԱՏԱԿ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ

Ազգային սոյն անմոռանալի յիշատակը մի փառաւոր հանդիսի պիտի տօնուի Շաբաթ, Մարտ 17, ժամը 8 ին երեկոյեան, յիսթորիկ Սթար Չօլ, անկիւն Յրդ Ավրիւ և 7րդ փողոց:

Կը հրաւիրուին ամէն ազգայինք պատուել անմահ Ջօրալուրին յիշատակը և վայելել սոյն շքեղ երեկոյթը, Կազմուրանք ձրի պիտի ծառայուին:

Մտից տոմսակի գինն է 25 սէնթ, և կ'ստացուի գաղթականութեան յանձնախմբի անդամներէն և թերթիս խմբագրութեանէն:

Ի Դիմաց Ծանփախմբին, Յ. Ս. ՏԻՈՆԵԱՆ, Գարտուղար:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԲ. ՓՐԿԻԶ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՅՈՒՍԹԸՐ

... Տէր—Սմբատի ՍՐԱՐԱՏԻ

Ուսմբերի Հայկական Եկեղեցւոյ շինութիւնն ամբողջապէս աւարտած և բացուին ու Օծման նուիրական հանդէսն կատարուած լինելով, արդ ժամանակ է այլ ևս որ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնն ըստ պահանջման իւր պարտաւորութեան զայ հրապարակաւ իր գործառնութեանց հաշիւները տալ Ազգին թէպէտ յիշեալ ձեռնարկին վերաբերեալ աշխատութիւնք ամբողջապէս փակեալ չնկատուիր տակաւին քանի որ կայ և կմնայ ապառիկներու կարևոր գումար մը նուիրատուութեանց ցանկին մէջ և այս պատճառաւ անվճար մնացած պարտքեր, բայց նկատելով թէ սպառնիկներու ամբողջութիւնն գանձման ապաստելով հաշուեալութիւնն յետագային կրնայ նուիրատու մեծարգոյ ազգայնոց դժգոհութիւնն պատճառել, ըստ որում հետագայք իր անշուշտ ամեն ոք որոշ գաղափար մը ունենալ չենքին կառուցման վերաբերեալ ամեն պարագայից, ուստի մնալով լիայն թէ իրենց նուէրներն տակաւին չվճարող ազնիւ ազգայինք պիտի հաճին իրենց խոստումներն կատարել նախ քան զամբողջական հրատարակութեան նուիրատուութեանց ցանկին, կը փութայ Հոգաբարձութիւնն հրատարակութեան տալ իւր գործոց մանրամասն տեղեկագիրը սկսելով մաս առ մաս յղել առ ձեռք Մեծապատուութիւնն նախ նուիրատուութեանց ցանկերն, ապա մտից և երկց հաշուեկշիռն և ի վախճանի Հոգաբարձութեանն սոյն դժուարին ձեռնարկին յաջողութեան համար ձեռք առած միջոցներու ամբողջ տեղեկագիրն որ կսկսի անցեալ տարւոյ փետ. 2 էն

Կը յուսամք Տէր—Սմբատի որ չպիտի զլանաք օգնել մեզ այս մասին, յատկացնելով սոյն հրատարակութեան թերթիդ մի անկիւնը, որով շնորհակատութիւն պիտի կացուցանէք Հոգաբարձութեանն:

Ի Դիմաց Սբ. Փրկիչ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան

Ատենադպիր Ատենապետ
ՄԱՐՏԻՐՈՍ Ա. ԿԱՐԱՊԵՏ Մ.
ՊԱՂՏԻԿԵԱՆ ԹԱՇՃԵԱՆ
Ուսմբեր, Փետր. 9 1891

ՄԱՍՆԱԻՐ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՔ

ՎԱՍՆ ՊԻՏՈՅԻՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Սեղանի շինութեան գին, տօլ. 45.75

Պարոնայք,

Ճգնալեան Գէորգ և Մկրտիչ 15—

Շուշանեան Ղազար 5—

« Սիմէօն 5—

« Մանուկ 5—

Կէօճիկեան Մարգար 5—

Շաղալեան Սարգիս 5—

Թիւֆէնիճեան Սարգիս 4—

44.00

ՍԵՂԱՆԻ ԵԱՄԿՈՑ ՄԸ

Բրուտեան Սարգիս 2,50

Թաշեան Սարգիս 4—

Պապոյեան Կարապետ 2—

Տէր Կարապետեան Ալէքսան 2—

Տէր Յովնանիսեան Պետրոս 250

Միւսայէլ 2—

« Յովնանիս 2—

17.00

Ի ՀԱՇԻԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ

ԱԹՈՒՆԵՐՈՒՆ.

Առաքելեան Գէորգ 5—

« Համբարձում 5—

Արոյեան Աւետիս և Մինաս 6—

Եղբարք 5—

Բրուտեան Ստեփան 6—

Թաշեան Յովնանիս և Պաղտատար Եղբարք 5—

Թովմաճանեան Մկրտիչ 5—

Պոյաճեան Եղիա 5—

Տէր Գրապարեան Կարապետ 5—

30.00

Իւզանկար պատկեր ՏԻՐԱՄՈՐ

ԿՈՒՍԻՆ ՅԻՍՈՒՍ Ի ԳԻՐԿ ՆՈՒՐԵԱՆ

Համբաւաւոր նկարիչ Տիար Գառնիկ

էքսքերճանէ:

ԺԱՄԱՑՈՑՑ ՄԸ

Նուիրեալ Ստեփան Բրուտեանէ:

ՎԵՑ ԵԱՂԿՆՈՑ

Նուիրեալ Պօղոս Մինասեանէ:

ՍԵՂԱՆԻ ԵԱՄԿՈՑ ՄԸ

Նուիրեալ Կարապետ Թաշեանէ:

ՍԿԻՂԻ ԵԱՄԿՈՑ ՄԸ

Նուիրեալ Կարապետ Փափագեանէ:

ՎԱՐԱԳՈՅՐ ՄԸ

Նուիրեալ Պօպօնցի ազգայնոց ուսմանց կողմանէ, նախաձեռնութեամբ Պր. Ստեփանի Գրիգորեանէ:

ՏԱՄՆԵՐԿՈՒ ԱՇՏԱՆԱԿ

Նուիրեալ յՈւսմբեր, Լօրէլ Բորոյնի

61 թիւ տունը բնակող: ազգայնոց կողմանէ:

(Շարունակելի.)

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—Պէրլինէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Թրքաց Սուլթանը մեծ եռանդեամբ Գերմաններէն լեզուն ուսանելու վրայ է:

—Վեհ. Սուլթանն Եննիւեան տօնի առթիւ Հայոց Պատրիարքարանին հինգ հարիւրսկի զբամաններու մը ըրած ըլլալը Կոստանդնուպօլսոյ լրագրաց մէջ կը կարդամք:

—Անգղիոյ Բարլամէնդի երկու խորհրդարաններուն ալ ներկայացուած է կառավարութեան կողմանէ, Ասիական Թուրքիոյ Ժողովրդեան վիճակին և Մուսա Պէյի դատաստանի մասին եղած թղթակցութիւնները: Այս տետրակը, որ կը պարունակէ նաև անցեալ Հոկտեմբերի մէջ ապստամբական դաւաճանութեամբ ամբաստանուած Հայոց դատաստանին տեղեկագիրը, անցեալ տարւոյ Յունիս 20 էն կսկսի և Դեկտ. 10 ով կը վերջանայ: Կըսուի թէ Մր. Ճէյմս Պրայս առաջին պատեհութեամբ Հայկական խնդրոյ վերայ վիճաբանութիւն պիտի բանայ, որու պիտի մասնակցի Մր. Կլաւդիոսը:

—Անցեալ ամսոյ 17 ին Վեհ. Սուլթանը իւր ներկայութեան կոչած է Պատրիարք խորհրդին Սրբազանն և Ոստիկանութեան վերատեսուչն և ըստ իւր խոստման ներուստն ընդհատ է ամէն Հայ բանտարկելոյ: Կայսերական այս հրամանին համեմատ 76 բանտարկեալներ ազատ թողուած են ոստիկանութեան բանտերէն, որոց մէջ կը գտնուի նաև

Վահրամ Պէյ: Հետեւեալ օրը որ էր օր Ս. Եննիւեան արձակեալը ներկայ գտնուած են Մայր Եկեղեցի ուր Պատարագ մատուցած է Պատրիարք Սրբազան: Բ. Դուռը հեռագրած է նաև զաւառաց կուսակալներուն արձակել ամէն բանտարկեալները բաց ի անոնց օրը ապստամբականաց գըլուխ ճանչցուած են:

—Յունիս 28 թուականը հեռագիր մը ևս կը ծանուցանէ թէ ապստամբական գործոց իբր մասնակից դատապարտեալ 11 անձանց ևս ներուստն ընդհատ է Սուլթանի կողմանէ:

—Վերստին հասկացողութիւն մը գոյացած է Վեհ. Սուլթանի և Անգղիոյ կառավարութեան միջև, Թուրքիոյ մէջ գերիներու առևտուրի խաբանման նկատմամբ: Այս հակամարդկային առևտուրը որ տակաւին հակառակ ամէն ստիպմանց Թուրքիոյ մէջ կը տիրէ, այս անգամ, կըսուի թէ, իրօք պիտի դադրի, և Թրքաբնակ գլխաւոր քաղաքացի մէջ կեդրոնացողներ պիտի հաստատուին, աղատեալ գերեաց պատապարտութեան և նոցա զաւակաց դատարարութեան համար:

—Արարատի վերջի թուոյն մէջ ծանուցած էինք Վիէնայի Օսմանեան Դեսպան Սաատուլայ Բաշայի անձնապաշտութիւնը և սորա ընտանեկան պատճառներէ յառաջ եկած ըլլալը: Այժմ հետզհետէ առնուած լուրեր կը հաստատեն թէ դժբաղդ դիւանագէտը Թրքական առևտրութեան զոհ գացած է: Սաատուլայ Վիէնայի Դեսպանութեան քօղին տակ Կոստանդնուպօլսէն հեռացուած էր Ապտուլ-Համիտի կողմանէ Սուլթան Մուրատի համակիրն եղած ըլլալուն համար: Իսկ ընտանիքը և զաւակները ի Կոստանդնուպօլսիս պահուած էին: Վերջերս Սաատուլայ լուր առնելով թէ իւր դուստրը մահուան վիճակի մէջ հիւանդ է, քանիցս հրաման խնդրած էր ի Կոստանդնուպօլսիս վերադառնալ զայն տեսնելու համար, բայց այս հրամանը ամէն անգամ իրեն տրուած էր, քաղաքավարական բայց դրական մեթօմամբ: Ուստի, Սաատուլայ տեսնելով որ իւր աքսորումը մշտնջենական է, և իրեն համար առիթ չի կայ իւր սիրելեաց հետ միանալու, մեղադրութիւնն իւր վրայ տիրելով, գործած է այս անձնապաշտութիւնը: Լօնտընի Արմէնիա կը յայտարարէ թէ Պերլինի Վեհաժողովի ժամանակ, դուրս խաբարի Մր. Մինաս 2եքաղաքի թէ ունեցած է տեղակալեալ նորին Վեհաժողովեան Հայկական խնդրոյ վրայօք, որ իր թերթի միջոցաւ ի կարգին պիտի հրատարակէ: Նաև յանկարծս կը ծանուցանէ թէ Սաատուլայ Բաշան Հայ մի էր:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն .

Ամսոյս 7ին, Նիւ-Եօքքի և չրջակայից Հայ գաղթականութեան սովորական նիստն տեղի ունեցաւ ընդ Նախագահութեամբ Պրն. Յակոբ Ազաւանի: Ներկայութիւնն սովորականէն նուազ էր, նոյն գիշերուան սաստիկ օդին պատճառաւ, բայց և այնպէս հարիւրի չափ ազգայինք անդ հաւաքուած էին: Արժ. Տ. Յովսէփ Մ. Վ. Սարաճեան խօսեցաւ սոյն Ժողովին, բացատրելով տեղոյս գաղթականութեանց վիճակին բարեւոյթն պէտքը, և ազգին մէջ դատարարականութեան ծաւալման ստիպողականութիւնը: Ժողովն բոլոր ծափահարութեամբ

ընդունեց Արժ. Ս. Հօր խրատական խօսքերը: և ի կարգին, ըստ առաջարկութեան Տիար Յովսէփ Սարաճեանի և հաւանութեամբ Ս. Հօր, Նորին Արժանապատուութեան ջանք արդէն կազմակերպուելու վրայ եղող խնամակալ յանձնարարին անդամ ընտրուեցան, Տիարը Հրանտ Մ. Բիրէջճեան, Նեւտոն Մ. Պոյաճեան և Փառնակ Մ. Այվատեան:

Ժողովն, Վարդանայ Հանգիսին առթիւ տրուելիք ներկայացման վարժութեան համար պատեհութիւն մը տալու նպատակաւ, իւր յառաջիկայ նիստն զանց ընել որոշելէ ետեւ օրաձգեց ժամը 11.30ին:

—Չիքալոյի մէջ ամէն կրօնքէ հարիւրաւոր քաղաքացիներ առ Նախագահ Հարիւրն և Մր. Պէյն աղերսագիր մը ստորագրած են, խնդրելով որ սոքա իրենց ազգեցողութիւնն բանեցնեն Միջազգային Դեսպանախորհուրդ մը Ժողովել տալու համար, որ Ռուսիոյ Հրէից վիճակն ի նկատի առնու և Պաղեստինն նոցա տրուելու հնարքին վրայ խորհի, միևնոյն սկզբամբ, ինչպէս որ Պուլկարի և ուրիշ Թրքական Նահանգներ իրենց բնական տէրերու տրուած են:

—Յառաջիկայ Շարաթ աւուր Գաղղիական չորհանուովի Թուրքիա կը մեկնին քաղաքէս երեք ազգայինք անդ վերահաստատուելու համար:

—Ճընէրալ Շէրման մեծանուն զօրավարը մահուան վիճակի մէջ հիւանդ կը գտնուի, սրտի հիւանդութենէ: Իւր բժիշկները և ընտանիքը նորա առողջանալուն ամէն յոյս կորուսած են, բայց մահը տակաւին չէ կարողացած յաղթել այդ անվեհեր զինուորին, թերթիս մամուլը գացած միջոցին կը տեղեկանամք թէ նուազ ինչ բարեւոյթն ցոյցեղ տուած է, բայց տակաւին անյոյս:

ՄԵՆՈՒՆԻ.
Տիւնեան, Զապէլ
Տիար և Տիկին Յ. Ս. Տիւնեան, բարեբաղդութիւն ունեցան աղջիկ զաւակ մը, Փետր. 7ին, ի թիւ 20 Իսդ. 120 ուր. Փողոց:

“The ARARAD”

No. 100 Centre Street, New York.

ADVERTISING RATES.

Inches.	1 Month.	3 Months.	1 Year.
1	\$ 2.00	\$ 5.00	\$16.00
2	3.50	8.00	25.00
3	5.00	11.00	35.00
4	6.00	14.00	45.00
5	7.00	17.00	55.00
6	8.00	20.00	65.00
7	9.00	23.00	75.00
8	10.00	26.00	85.00
1 Col.	11.00	29.00	95.00
1 Col.	20.00	55.00	180.00

Per Line (Agate) 15 cents each issue.

The above prices are for the first and last pages only. Ten per cent additional for the third page, next to reading matter.

If you wish

to Advertise

Anything

Anywhere

at Any time

WRITE TO

GEO. P. ROWELL & Co.

No. 10 Spruce Street, NEW YORK.

Ս. ՕՃԱՆԵՍԵԱՆ.

Արեւելեան և Տեղական Նպարեղէններ:

59 Ուաշինկոն և 216 Էլտրիք Փողոց:

Սոյն Խանութներու մէջ կը վաճառուի մասնաւոր խնամք Կ. Պօլսէ բերուած Արեւելեան ամէն տեսակ Նպարեղէնք, Ազնիւէններ, ընտիր Պտուղներ, Ամերիկացոց ախորժիկ ու նուէրի արժանի Անուշեղէնք, զանազան ընտիր գլխիկներ ու օղիներ, նաև Տաճկական Գալապիտ առաջին կարգի ծխախոտն շինուած սիկարէտներ:

Եանձնարարութիւնք ժամանակին խնամք կը կատարուին, և յաճախորդներն գոհացնելու համար ամէն ջանք ի դուրս կը դրուին:

Mrs. Winslow's

Soothing Syrup.

Տիւ. ՈՒՆԵՂՈՒ ՈՂՈՒՅԻՑ ՕՇԱՐԱԿ:

Թիւսն տարիներէ աւելի է որ Տիկին Ուինլօ Ուինլօ Օշարակը միլիօնաւոր մայրերէ կը դուրսբերուի իրենց զաւակաց ահույ հասնելու ժամանակ: Գիշերները կը խանգարուի և հանգստութիւնն իր կը վրդովուի ահույ հանելու ցաւէ հիւանդ, տառապող և լացող զաւակէ մը: Եթէ այդպէս է, նա միջապէս Ահույ Հանող Մանկանց Համար «Տիկին Ուինլօ Ուինլօ Օշարակ» էն չի մը առէք: Սորա արժէքը անհամար է: Սեղմ պղծաւոր տառապալիս անմիջապէս դարման մը պիտի ըլլայ: Մայրեր, ասոր վրայ կրնաք ապաւինիլ: Բնաւ սխալ չի կայ: Կը բժշկէ Փորթուծութիւն, կը կանոնաւորէ Ստամոքքը և Աղիքները, կը բժշկէ Աղեաց խիթը, կը կակցցնէ Լիւնները, կը նոսազեցնէ բորբոքումն, և ամբողջ կազմուծը կը կազդուրէ և կը զօրացունէ: Ահույ Հանող մանկանց Համար «Տիկին Ուինլօ Ուինլօ Օշարակ», ճաշակի հաճելի, և Միացեալ Նահանգաց մէջ ամէնէն հին և ամենալաւ բժշկուհի և անուշիչներէն մէկուն գեղագիրն է, և կը ծախուի աշխարհիս ամէն գեղազորներու քով: Իւրաքանչիւր չի չի գինն է քան և հինգ սենթ: Ուզեցէք միայն,

“Mrs. Winslow's Soothing Syrup.”

ԱՅԻ

Հ. ԷԿԻՆԵԱՆ, Հայերէն միակ

Տպագրելի Միացեալ Նահանգս,

պատիւ ունի ծանուցանել թէ

յանձն կ'առնէ տպագրել ամէն

տեսակ Հայերէն և Անգլ. գործ

մեծ կամ փոքր քանակութեամբ

Տպագրութեան մաքրութիւնն և

աժանութիւնն կարելի չէ գերազանցել: Իր նիւ եօրքի մէջ ձուլել

տուած Հայերէն ընտիր տառերն

բաւական են մեծ կալ հատորներ

տպագրելու: Դիւր, տեսող կամ

և է տպագրելի բանուներող

ազգայնոց ուշադրութիւնն կը

հրաւիրուի այս մասին:

B. H. TASHJIAN & Co.,

100 Centre St,

New York.

BOOK AND PAMPHLET BINDERS

CLOTH & PAPER BINDINGS,

MAGAZINES,

Reviews and Newspapers bound and

mailed. Estimates furnished cheerfully.

— ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ —